

**Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՌԻ ՔԱՐՈՋԸ  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ  
ԴԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ**

(29 մայիսի 2003 թ.)

«Սա է, որ ի գերեզմանէն յարեաւ և աւերեաց զդժոխս և վերհամբարձեալ փառօք զայ առ Հայր՝ Տէր կարող ի պատերազմի».

«Սա է, որ հարություն առավ գերեզմանից, ավերեց դժոխքը և վերհամբարձյալ փառքով զնաց Հոր մոր՝ Տէրը կարող պատերազմի»:  
(Շարակնոց)

«Ես հաղթեցի աշխարհին», որպես ավարդը իր առաքելության՝ այս վերջին խոսքերը ինչեցին Օդարականի շրթներից: Իր երկրավոր կյանքի պայքարը մարմնավորող այս խոսքերով կարծես մի հաղթարշավի համեստ վերջնահանդիս էր պարրասպել հալթության նշանի խաչափայտին զամված Ասդօն Որդին:

«Խաղաղություն և թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, որ տարքեր է այս աշխարհի դրված խաղաղությունից, մի խոռվածք և մի վախեցեք» (Շոկ. Ճ՛՛ 27):

Մրգամոլոր և սրբարեն առաջաներին սակայն տանջում էր թերահավագ այն միտքը, թե ո՞վ էր այդ Օդարականը, որի խաղաղության ու սիրո մարգարեական խոսքը քաղցր մանաւայի պես ճաշակեց իրենց քիմքը, պայծառացավ ականջալոր միտքը՝ իմաստությամբ Սոլոմոնի, Ասվածապարզամ խոսքերով Եսայի մարգարեի և երգով Դավթի, սրբերն ու հոգիներն ականագես դարձան Պայծառակերպությանն ու երկնային գորաց զնդերի փառարանությանն ու երկրապարությանը:

Դեռևս հազարամյակներ էլ պիտի պահանջվեն, որ մենք՝ մարդ արարածներս, փորձներ նկարագրել փոխան խաղաղության՝ տագնապած առաջաներին, որոնք, Քրիստոսի հրաշափառ Նարության ավելիսը սրբներում ծրարած, շրապում էին Գալիլեա, որպես ժամանել էր նրանց Հիսուս:

«Խորհուրդն մեծ և սրանչելին» Իր հարուցյալ մարմնով աշխարհային քառասնօրյա հրաժեշտի օրերն էր ապրում Իր փոքր ածու հոգի հետ, երկնային խաղաղությունն էր հովանի դարձել՝ որպես ջրինելոյց հետո հաշության ուխտի կամարակապ ծիածան, Նոր Ուխտով ապրելու վերջին պարզամներն էր փոխանցում առաջաներին՝ հայրնվելով Երուսաղեմում, Էմմավուսի ճանապարհին, Գալիլեայում, Տիբերիայի լճի ափին.... մինչև Զիթենյաց լեռ:

Երուսաղեմի պարիսպներից դուրս, Ուսկե քարակերդ դարպասներին դեմառիեմ, մի բարձրունք է խոյանում, կարծես՝ բաց կանաչագույն թավիշով զգեստավորված: Զիթենյաց ծառերով առարկ սրբավայրը դեռևս ունի երկհազարամյա բնակիչներ, որոնք սրբագեղիներում հենջող աղոթքներին ու ծեսերին միախառնում են մեղմ թափահարող իրենց ճյուղերը որպես ականագես վկաներ՝ պարմենվ Քրիստոսի հրաշափառ Նամբարձման մասին, որ Ասդօն Որդին իր ողքերի վերջին հայունը թողեց աշխարհի վրա և փառքով համբարձեց երկինք՝ բազմելով աշ կողմը Հայր Ասդօն:

Շարականազրի օրիներգությունը փորձում է մեզ ներկայացնել Քրիստոսի հրաշափառ համբարձումը՝ ասելով. «Զարդութեան երկնային իշխանությունները՝ փեսնելով վերելքը Զո, Քրիստոս, խումբ առ խումբ սարսափիած կրկնում էին՝ ո՞վ է սա՝ փառքերի թագավորը»:

Դու ևս փառքերի թագավորը և Տերը զորությունների: Ուսկի ուղիդ հարվածի լուսն շիրն է առաջնորդում մեզ 1700 տարիներ շարունակ, զարկի կերպվածքով դաճարի լուսն կամարականը թասձել է հայոց ազգին, որ ունի դրսիլը՝ «Եջ Միածինն ի Նորէ և լոյս փառաց ընդ նմա»: Համբարձումից հետո երկնային զորաց լոյսի փառքով հջար և օրինեցիր հայոց երկիրը Զո փրկարար խորհրդով: Հայրնվեցիր Հայոց Հայրապետին՝ Լուսավորչն մի ողջ ազգի, որը Պետրոսի նման չայլայլեց Պայծառակերպությունիցոց, այլ խոհեմորեն զորեց անսասան հավաքիքի ուժով՝ կերպելով Միածնակած այս Սուրբ Տաճարը և հասպատելով Հայրապետական Սուրբ Աթոռը Էջմիածնի:

Հայասպանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր, գոնախմբելով Համբարձման լուսն, իր Տիրուանող խորհրդին միախառնել է նաև հիշարակը փոխադրության Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սուրբ Էջմիածին 1441 թվականին, երբ իմաստուն վարդապետների և մեծանուն հայ իշխանաց ազգային նախանձախնդրությամբ Հայրապետական Աթոռը Վերահասարակվեց Տերունակոյի Հայոց Սուրբ հոգի և Աստվածահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս երկնակերպ դաճարում:

Կյանքի հազարամյա փորձն է հայ ժողովրդին ուսուցանել, թե «Զամենայն ազգս Հայոց կապեալ կա ի վերայ աջայն Սրբոյն Գրիգորի և Սրբոյ Էջմիածնի»: Պարմության անողոր ալեկոնությունը աշխարհասկիութ է դարձել մեր ժողովրդին, սակայն կրկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, որ Լուսավորչի կանքենի լոյսով՝ որպես անսպար փառոս, իր շնորհագր Գահակալի շահակրությամբ հովվում է ընդույզ հովքը Միածին Որդու:

**«Ուր մարմին է անդ և արծուիք ժողովեսցին», (Որդեռ մարմինն է այնուհետ է արծիվներն են հայաբուն) (Ղուկ. ԺԷ 37):**

Վեհափառ Տեր և Սրբազնակարար Հայրապետ Ամենայն Հայոց, Ձերդ Սրբության սրբարար կոնդակով այս դարին հոչակել եք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծնան 1700-ամյակի դարի, որի Միածնակած Սուրբ Խորանին ծնկադրելու կարող ուղարկի է զայիս հայաստանաբնակ և սիյուռքահայ մեր ժողովուրդը՝ իր առաջնորդների հանդիսապետությամբ: Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի Սուրբ Էջմիածնում վերահասարակության, ուսիդի և նրա արժանակոր և Աստվածածնի Գահակալի դուռն է նաև այսօր: Խոնարհարար շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը և աղոթակից ենք ողջ միաբանությամբ այն խուռներամ հոդին, որ ամեն կիրակի Ձերդ Սրբության երավերով ժողովի է գումարվում Իջման Սուրբ Սեղանի և Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռիդ շուրջ:

«Փառք Զեզ, Ասդրուած, փառք Զեզ, յաղագ ամենային, Տեր, փառք Զեզ», որ անկախ հայրենիքի գարուն հովիդներում շարունակում են հնչել համբարձման խաղիկներն ու զորդաները և գոնազել ծաղիկներից ներշնչված՝ սեր են երգուն, վիճակ զցուն...., իրենց բախտը կապելով Նախանձամունիդ բարեհաճությանը: Հայ ժողովուրդը՝ որպես ընդդրյալ ժողովուրդ, անսասան վեմ է, որի քարայրներուն կողք-կողքի հնչում են ժողովդական երգն ու պարը, ինչպես բարախող սիրով, և աղոթքն ու փառաբանությունը՝ որպես եղջի, որոնց ներդաշնակությամբ երաշխասվորվում է հավերժի ճամփան:

«Քրիստոսի սերը և խաղաղութիւնն ընդ մեզ, ընդ ամենեսեանս, ամէն»: